Զեկույց

Մասիս համայնքի 2022 թ. նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում ձեռք բերված հիմնական միջոցների հաշվառման և վերաբաշխման վերաբերյալ

2022 թվականի նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում Մասիսի համայնքի ֆոնդային բյուջեի միջոցների հաշվին ձեռք է բերվել հիմնական միջոցներ 37 607 300 դրամի, որն անհրաժեշտ է ներառել հաշվեկշռում և հաշվառել որպես համայնքային սեփականություն համաձայն հավելված 1-ի:

Համաձայն կից հավելված 1-ի՝ 2 854 100 դրամ արժեքով գույքերը հաշվեկշռից-հաշվեկշիռ հանձնել ,,Մասիսի Թիվ 1 մանկապարտեզ,, ՀՈԱԿ-ին անհատույց անժամկետ օգտագործման իրավունքով:

Մանկական մահճակալները 898 900 դրամ արժեքով՝ հաշվեկշռից-հաշվեկշիռ անհատույց անժամկետ օգտագործման իրավունքով հանձնել Թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ին:

Ձեռք բերված 965 200 դրամ արժեքով գույքերը հաշվեկշռից-հաշվեկշիռ անհատույց անժամկետ օգտագործման իրավունքով հանձնել ՄՊՍԿ ՀՈԱԿ-ին:

Մասիսի համայնքապետարան ՀԿՀ-ին օգտագործման հանձնել ընդհանուր 32 889 100դրամ արժեքով գույքերը:

Աշխատակազմի քարտուղար Կ. Գաբրիելյան

Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժ/պ Ա. Կոստանյան